Հիմնական դպրոց

- Տեխնոլոգիական հանրակրթական ստուգատեսի ընթացքի մասին դպրոցների ղեկավարների հաղորդումները

Տեխնոլոգիական ստուգատեսն արդեն մեկնարկված է: Սովորողները տեխնոլոգիայի ժամին, կերպարվեստ ընտրությամբ գործունեության ժամին պատրաստում են կոլաժներ, պաստառներ ցուցահանդես վաճառք կազմակերպելու համար: Նոր թաղարային բույսեր են տնկում և մշակում:

2-4 տարեկաններ:

Կարողանում են շորերը, կոշիկները հանել-հագնել, հիգիենային հետևել, ուտել, քնելու պատրաստվել, արթնանալ, որևէ գործունեությունից առաջ կազմակերպել, ընտրել անհրաժեշտ նյութը, իրը, ընտրել և դիտել տեսանյութեր, ընտրել և խաղալ, լսել ընթերցումը, երաժշտությունը, կազմակերպել, մասնակցել, խաղին, համագործակցել, զրուցել, պատմել, ներկայանալ, բարևել, հրաժեշտ տալ, սեղան-աթոռները, ներքնակները, այլ իրեր դասավորել, հարմարեցնել գործունեությանը, կարողանում են օգտագործել այգեգործական գործիքներ, բակի մաքրման աշխատանքներ անել, բույսերի, կենդանիների խնամք:

5-6 տարեկաններ

Ինքնուրույն կարողանում են հանել և հագնել շորերը և կոշիկները: Հետևում են հիգիենայի կանոններին: Խոհանոցում շատ ինքնուրույն են. սպասքաղրում են, ուտում են , կարողանում են հավաքել և մաքրել սեղանները, դասավորել աթոռները: Հետևում են դասարանի մաքրությանը: Խնամում են դասարանի բույսերը, կարողամում են տնկել նորերը, մասնակցում են բակի մաքրման աշխատանքներին, ծառ են տնկում: Միացնում են համակարգիչը և էլ. գրատախտակը, օգտվում են ինտերնետից. մտնում են մեր դասարանական բլոգ , ընտրում են իրենց սիրած երգերն ու մուլտֆիլմերը, երաժշտություն են լսում, ձայնագրում են և տեսագրում: Կարողանում են խաղալ և նոր խաղեր հորինել, լեգոներով և խորանարդիկներով հետաքրքիր բաներ կառուցել: Ազատ ձևակերպում են իրենց խոսքը, կարողանում են ներկայանալ, զրուցել, պատմել:

6-7 տարեկաններ .
• հետևել անձնական հիգիենայի կանոններին՝ ուտելուց առաջ լվացվել, մաքուր պահել հագուստը
• Պահպանել իրեն շրջապատող միջավայրի մաքրությունը՝ օդափոխել դասասենյակը, սրբել փոշիները, ուտելուց առաջ սպասք դնել, սեղանին ու հավաքել:
• Խնամել բույսերը՝ տնկել ծաղիկներ ու բույսեր, փխրեցնել հողը, ջրել, կտրել չորացած տերևները:

• Կատարել բնագիտական փորձեր, գրանցել տվյալները։
• Կողմնորոշվել ծանոթ տարածքում՝ դպրոցում, տանը, բակում։
• Պատմել բնության երևույթների մասին, դրանք նկարագրել է և եզրահանգումներ անել։
• Իրեն հասանելի տարբեր միջոցներով ներկայացնել միջավայրը, մարդկանց, դեպքերը։
• Քաղաքավարության, երթևեկության կանոներ։
Պետք է կարողանան նկարելուց առաջ պատրաստվել՝ թուղթ վերցնել, ջրամանները ջրով լցնել, գուաշները բաժանել, նկարելուց հետո , հավաքել, լվանալ, մաքրել սեղանները/այս կետը վերաբերում է բոլոր տեսակի տեխնոլոգիական աշխատանքներին՝կավ, ծեփամածիկ, գունավոր թղթերով աշխատանք/
Պիտի կարողանան իրենց համակարգիչները միացնել, անհրաժեշտության դեպքում լիցքավորել, աշխատանքից հետո հավաքել, դնել իրենց անհատական պահարանները։

7-8 տարեկաններ

* հետևել անձնական հիգիենայի կանոններին՝ ուտելուց առաջ լվացվել, մաքուր պահել հագուստը, կապել կոշիկի քուղերը։

* Պահպանել իրեն շրջապատող միջավայրի մաքրությունը՝ օդափոխել դասասենյակը, սրբել փոշիները, ուտելուց առաջ սպասքադնել սեղանն ու հավաքել։

* Խնամել բույսերը՝ տնկել ծաղիկներ ու բույսեր, փխրեցնել հողը, ջրել, կտրել չորացած տերևները։

* Կատարել բնագիտական փորձեր, գրանցել տվյալները։

* Կողմնորոշվել ծանոթ տարածքում՝ դպրոցում, տանը, բակում։

* Պատմել բնության երևույթների մասին, դրանք նկարագրել է և եզրահանգումներ անել։

* Իրեն հասանելի տարբեր միջոցներով ներկայացնել միջավայրը, մարդկանց, դեպքերը։

Սովորել քաղաքավարության, երթևեկության կանոներ։

8-9 տարեկաններ

Ինքնուրույն հագնվել, պահպանել հիգիենայի կանոնները։ Պահպանել զգուշության կանոնները, իմանալ երթևեկության կանոնները։ Պահպանել համակարգչային հիգիենայի կանոնները։
Հետևել շրջապատի մաքրությանը, կատարել հանրօգուտ աշխատանք, իրականացնել էկոլոգիական նախագծեր։
Ինքուրույն սովորել դասերը, ընտրել և դիտել տեսանյութեր, իմանալ մի շարք

հանակարգչային ծրագրեր, կիրառել դրանք ուսման մեջ (word, PowerPoint, pait): Պատրաստել ուսումնական ֆիլմեր՝ կիրառելով պարզ մոնտաժային ծրագրեր, ինչպես MoviMaker ծրագիրն է:
Ինքնուրույն վարել անհատական բլոգը: Ազատ օգտվել համացանցից և էլեկտրոնային հասցեից:
Կատարել չափումներ, համեմատումներ, լաբորատոր փորձեր: Գրանցել հավաքած տեղեկությունները, կազմել աղյուսակներ:
Օգտվել ձայնագրիչից, լուսանկարչական ապարատից(կամ կատարել այս գործողությունները բջջային հեռախոսով):

Կարողանալ ազատ օգտվել մկրատից, գունավոր թղթերից պատրաստել բացիկներ, պատրաստել կոլաժներ տարբեր նյութերից:Հղկել կավը և պատրաստել տարբեր պատկերներ: Նկարել գուաշով և ջրաներկով ազատ թեմաներով, ինչպես նաև արտանկարել երկրաչափական պատկերները եռաչափ: